ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 20 » մարտ 2024թ. No 1539 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1304-24 առ 18.03.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցել երաշխավորված 1 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4.Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Կաֆետին Ռապիդ դեղահատեր թաղանթապատ 400մգ դեղի (N18920/1/1) գրանցման հավաստագիրը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) Ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի մարտի « 20 » - ի N 1539 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոյեի համապատասխանեցման (միայն Հայաստանում կիրառման համար)

ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Կաֆետին Ռապիդ	իբուպրոֆեն (իբուպրոֆեն լիզին)	դեղահատեր թաղանթապատ	400մգ; (10/1x10/) բլիստերում, (20/2x10/) բլիստերում	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե	Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն	ԱԴ	21999 (004158) 15.03.2024